ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Արմավիրի մարզ
Արազափի համայնք
04403613
թիվ 109
«10» 10 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ավագանու 2013թվականի հոկտեմբերի 09-ին կայացած թիվ 7 արտահերթ նիստի որոշումը:

Առդիր՝ 6 թերթ:

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / [signature] / Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

9438-13
10 10 2013

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ**

---

**«09» հոկտեմբերի 2013թ. N 20-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N23-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թվականի հուլիսի 18-ի N781-Ն որոշումը, N45 պայմանագիրը, և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

<u>ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 23-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1)Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացում (սուբվենցիա ) ավելացնել 228.1 հազ. դրամ,
01.1.1 բաժին խումբ դասի 4212 հոդվածին ավելացնել 218.1 հազ. դրամ 09.1.1 բաժին խումբ դասի 4511 հոդվածին ավելացնել 10.0 հազ. դրամ, 11.1.2 բաժին խումբ դասի 4891 հոդվածից պակասեցնել 145.0 հազ. դրամ 01.1.1 բաժին խումբ դասի 4823 հոդվածին ավելացնել 25.0 հազ. դրամ և 01.6.1 բաժին խումբ դասի 4241 հոդվածին ավելացնել 120.0 հազ. դրամ համայնքի տարածքում խմելու-կենցաղային նպատակով օգտագործվող երեք հորատանցքերի հիդրոերկրաբանական տեղեկատվության և անձնագրի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ

Բաբոյան Փարամազ
Գրիգորյան Գոռիկ
Թովմասյան Գրիգոր
Մելքոնյան Սամվել
Ալոյան Խոլո

ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/ / Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2013թվականի հոկտեմբերի «09»
գ. Արազափ

*ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԶԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 09 –Ի N 20 - Ն ՈՐՈՇՄԱՆ*

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ավագանու 2013թվականի հոկտեմբերի 09-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին» N20-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով, և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

*ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / / Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# *ՏԵՂԵԿԱՆՔ*

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի ավագանու 2013թվականի հոկտեմբերի 09-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արազափի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին» N20-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:*

*ԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/* [signature] */Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*